ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 30-ի թիվ 10 նիստի օրակարգը՝

1. Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի, համայնքապետարանի աշխատակազմի և <<Նշավանի մանկապարտեզ>>/համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/-ի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի
հաստատման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի Մարզի Նշավան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված ակտը գույքագրման արդյունքների մասին:
4. Համայնքի 2017թ. բյուջեի հաստատման մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՈՆԻԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՁԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 17

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ՆՇԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>/ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ /-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել 2017 թվականի համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, աշխատակազմի և <<Նշավանի մանկապարտեզ>> / համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայնթիվ 1 և 2 հավելվածների:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 2016թվականի N 18

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Նշավան համայնքում սահմանել 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմական շինարարության տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել.

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանել 15000 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 դրամ

բբ) 501քմ-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ

բգ) 1001քմ-ի մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ

բդ) 3001քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ

դ) 20քմ և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի կետով սահմանված նորմերը:
3.Համայնքի վարչական տարածքու շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:
4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա/ մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:
բ/ 26--ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա/ մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500
դրամ:
բ/ 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:
5.Համայնքի տարածքում
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 1քմ համար 350դրամ:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ) խանութներում կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին զովազդի համար՝ 2000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին զովազդի համա՝ 1000 դրամ.
գ) այլ արտաքին զովազդի համար՝ 1000 դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
1, 2, 3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարական շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ:
2. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու ետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:
3. Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝500 դրամ:
4. Աղբահանության վճար՝յուրաքանչյուր անձի համար ամեն ամիս 20 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՈՆԻԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 2016թվականի N 19

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏԸ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել հանձնաժողովի կողմից ներկայացված ակտը գույքագրման արդյունքների մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԶԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1
Նշավան համայնքի
ավագանու
30.11.2016թ թիվ 17 որոշման

2017Թ ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ
Համայնքի ղեկավար	1	185000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	100000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Աշխատակազմի քարտուղար 1.2-1.	1	146000
Աշխատակազմի գլխ մասն. 2.3-1	1	145000
Աշխ. Առաջատար մասն. 3.1-1	1	120000
Աշխատ առաջին կարգի մասն.3.2-1	1	82000
Աշխատ Երկրորդ կարգի մասն.3.3-1	1	76000
Քաղաքացիական աշխատանք		
գրադարանավար	1	73800
հարկահավաք	1	79100
աղբահանության գծով աշխատակից	1	73800
Տեխսպասարկման անձնակազմ		
Օպերատոր	1	79100
վարորդ	1	73800
հավաքարար	1	73800
պահակ	1	73800
Այգեպան.	1	73800
Ցրիչ	1	79100

Համայնքի ղեկավար՝ Պ Հակոբյան

Հավելված 2
Նշավան համայնքի
ավագանու
30.11.2016թ թիվ 17 որոշման

2017Թ ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՍՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 8

Հաստիքային միավորներ 6

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնական դրույքաչափը
տնօրեն	1.0	133400
Հաշվապահ գործավար	0.5	60000
դաստիարակ	1.25	150000
Երաժշտութ. դաստիարակ	0.25	30000
դայակ	1	73800
խոհարար	1	73800
պահակ	1	73800
ընդամենը	6	594800
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏՈՂ	8	

Համայնքի ղեկավար Պ Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 2016թվականի N 20

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Նշավան համայնքի 2017թ. վարչական բյուջեն
Եկամուտների գծով ----------33891.6 հազ.դրամ
Ծախսերի գծով ----------33891.6 հազ.դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ----------33891.6 հազ. դրամ
Այդ թվում
1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ----------8845.0 հազ.դրամ
Այդ թվում
Գույքային հարկեր անշարժ գույքից--------8450.0 հազ.դրամ
Այդ թվում
Գույքահարկ շենքի և շինությունների ---------150.0 հազ. դրամ, որից՝
Ֆիզիկական անձանցից ----------150.0 հազ.դրամ
2.ՀՈՂԻ ՀԱՐԿ ----------5800.0 հազ.դրամ
Այդ թվում
Ֆիզիկական անձանցից----------5800.0 հազ. դրամ
3.ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ----------2500.0 հազ.դրամ
Տեղական տուրքեր ----------190.0 հազ.դրամ,որից
Շինությունների և շինարարության թույլտվության համար-------30.0 հազ. դրամ
Ծխախոտի վաճառքի թույլտվություն ----------80.0 հազ.դրամ
Խմիչքների իրացման համար ----------80.0 հազ.դրամ
Պաշտոնական դրամաշնորհեր այդ թվում ----------25046.6 հազ.դրամ
Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ ----25046.6 հազ.դրամ

Այլ եկամուտներ այդ թվում ----------205.0 հազ.դրամ,որից
Հողի վարձակալություն ----------55.0 հազ.դրամ
Տեղական վճարներ /աղբահանություն/----------150.0 հազ.դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ 01.01.01.51
4111-աշխատավարձ ----------17600.0 հազ.դրամ
4212-էներգետիկ ծառայություն----------950.0 հազ.դրամ
4213-կոմունալ ծառայություն ----------150.0 հազ.դրամ
4214-կապի ծառայություն ----------400.0 հազ.դրամ
4215-ապահովագրական ծախս ----------30.0 հազ.դրամ/ծառ.մեքենայի ապահովագրություն/
4221-գործուղում ----------50.0 հազ.դրամ
4231-վարչական ծառայություն----------300.0 հազ.դրամ/Մխչյան համայնք/

4233-աշխ.Մասն զարգ ծառ----------100.0 հազ. դրամ
4234-տեղեկատվական ծառայություն---- 350.0 հազ.դրամ/թերթերի և ամսագրերի արժեք/
4252-մեք. և սարք. ընթացիկ նորոգում և պահ.-------600.0 հազ.դրամ

4261-գրասենյակային նյութեր----------400.0 հազ.դրամ
4264-տրանսպորտային նյութեր----------700.0 հազ.դրամ
4267-կենցաղային նյութեր----------150.0 հազ.դրամ
4823-պարտադիր վճար ----------20.0 հազ.դրամ/տեխ.զննում/
Ընդամենը ----------21800.0 հազ.դրամ

2.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09.01.01.51
4637-ընթացիկ դրամաշնորհ պետ.և համայնքային ոչ առևտրական կազմակերպություն 6500.0 հազ.դրամ
Ընդամենը----------2500.0 հազ.դրամ
3.ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 09.05.01.51
4637-ընթացիկ դրամաշնորհ ----------300.0 հազ.դրամ/երեժշ. դպրոց/
Ընդամենը----------300.0 հազ. դրամ
4.ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 01.06.01.52
4241-մասնագիտական ծառայություն ----------200.0 հազ.դրամ
4819-նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմ. 30.0 հազ.դրամ/անդամավճար/
Ընդամենը ----------230.0 հազ. դրամ
5.ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ 05.01.01.51
4213-կոմունալ ծառայություն----------1100.0 հազ.դրամ/աղբահանություն/
Ընդամենը----------1100.0 հազ.դրամ
6.ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ 06.04.01.52
4251-շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում ----------450.0 հազ.դրամ
Ընդամենը----------450.0 հազ. դրամ
7.ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ07.06.02.55
4637- ընթացիկ դրամաշն. պետ. և համայնք. ոչ առևտրային կազ. 250.0 հազ. դրամ

8.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 08.02.04.51

4269-հատուկ նպատակային այլ նյութեր----------500.0 հազ.դրամ

Ընդամենը----------500.0 հազ.դրամ

9. ՀԱՄԳՍՏԻ ԳՈՏԻ և ԶԲՈՍԱՅԳ. ԿԱՌՈՒՑՈՒՄ 08.01.01.52

5112- շենք շինությունների կառուցում - 415.0 հազ.դրամ

10.ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 08.02.01.51

4111-աշխատավարձ---------- 900.0 հազ.դրամ /աշխատավարձ/ .

Ընդամենը ----------900.0 հազ.դրամ

11.ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶ. ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 05.04.01.51

4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություն---------100.0 հազ.դրամ

Ընդամենը----------100.0 հազ.դրամ

12.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10.07.01.54

4726-թաղման ծախսերի համար-700.0 հազ.դրամ

4729-ֆինանսական աջակցություն- 2500.0 հազ.դրամ

Ընդամենը ----------3200.0 հազ.դրամ

13.ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑ ԿԱՌՈՒՑՑ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ 04.02.04.51

4251-շենք. և կառույց. ընթացիկ նորոգում ----------200.0 հազ.դրամ

Ընդամենը----------200.0 հազ.դրամ

14.ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10.07.01.55

4819-նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություն --------250.0 հազ.դրամ

ընդամենը----------250.0 հազ.դրամ

15.ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 08.02.05.52

4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություն---------150.0 հազ.դրամ

. Ընդամենը---------- 150.0 հազ.դրամ

16.ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ 11.01.02.51

4891-պահուստային միջոցներ----------1596.6 հազ.դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ - 33891.6 հազ.դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ

2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՈՆԻԿ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՁԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ**